

մզկիթն Օմարայ վասն հազուոյ Սուլթանին , եւ թոշակս աւնուին յարդեանց դռնապանութեան տաճարին : Սորա եւս եղծին զառաջին սահմանն , զի յիւրաքանչիւր յամիսս խնդրէին 30 դահեկան , եւ 'ի տարեգլուխն գումար ինչ գին զգեստու եւ չուխայի , եւ յոչ տալն ոչ բանային ըզդուռն եւ տային Քրիստոնէից զպէս պէս նեղութիւնս . եւ այս եւս բարձաւ 1100 . 'ի Վ Րէպիլէվիլէ հրովարտակաւ : եւ 'ի սոյն աւուրս վերստին մոռացեալ այլազգեաց զայն ամենայն , սկսան բռնանալ 'ի վերայ քրիստոնէից , եւ յաւուրս հանդիսից եկեալ բազմութեամբ նստէին 'ի դուռն , եւ բաց 'ի սահմանեալ թոշակաց պահանջէին մեղրամոմս , եւ 'ի տօնի Զատիկին զմեծամեծ ընծայս եւ զայլ իրս , եւ այսպէս պատճառանօք ծանրանային 'ի վերայ քրիստոնէից , եւ 'ի ծանուցանել Սորհրդականաց զըլխաւորաց ազգին յաւուրս Ստեփաննոս Պատրիարքի՝ նորոգեցաւ հրովարտակն եւ բարձան անկարգութիւնք այլազգեաց սակաւ ինչ , 1141 :

Սուլթան Մահմուտ Արքայ խնդրեաց զտումարս կալուածոց (վազֆ) ամենայն քրիստոնէից , ընդ որս եւ Հայոց եւ Երուսաղէմի , զի գործողութիւնք եւ դարձուածք նոցին լիցին 'ի ձեռն Վերատեսչի կալուածոց Տէրութեան (Էպիպոֆ նազրի) , այլ 'ի խնդրանաց Պէղճեան Յարութիւն Ամիրայի եւ այլ զլխաւորաց ազգին վերստին շնորհեաց զայն Արքայ , այնու պայմանաւ զի 'ի տարւոջ միանգամ քննեսցին տումարք կալուածոց 'ի Դուռն 'ի ձեռն Վերատեսչին . այսպէս գերծան 'ի վտանգէ կալուածք եկեղեցեաց եւ վանօրէից , ընդ որս Հայոց եւ Երուսաղէմի (1832 . 'ի 12 Փետրվարի) : Տուաւ հրովարտակ արքունուստ ըստ մտաց Հէճճէթին եւ Իլամի Դատաւորին վասն հաւասար բաժանորդութեան եւ պատարագելոյ Հայոց 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի 1140 'ի 10 Րէպիլէվիլէ ամսոյ , որով հանդարտեցան միտք Սորհրդականաց եւ միաբանաց , եւ բարձաւ իսպառ կազ եւ կռիւ 'ի Տաճարէ անտի :

Այլ յեկեղեցին Բեթղէհէմի անպակաս էր ընդ Յունաց խոռովութիւնն եւ վէճն . զի 'ի ժամանակին յայնմիկ միաբանք Հայոց թէպէտեւ կրեցին զբազմադիմի չարչարանս եւ զնեղութիւնս 'ի նենգութենէ Դատաւորաց՝ զորոց եր-